ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ ԱԼԲԵՐՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 387-630-ԱԿԱՆ ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շահնազարյան Արտաշես Իվանի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Եղիազարյան Արման Սամվելի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մելիքյան Արթուր Տիգրանի

Առաջատար կազմակերպություն՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. հունիսի 1-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. ապրիլի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց պատմագիտության կարևոր հիմնախնդիրներից է միջնադարում պետականության ու դրա դրսևորման ձևերի ուսումնասիրությունը: Այդուհանդերձ, պետականությունը հիմնականում կապելով թագավորական իշխանության առկայության հետ, շատ հետազոտողներ բաց են թողել հայոց պատմության 428–885 թթ. միջանկյալ ժամանակաշրջանը: Դրա պատճառն այդ ժամանակամիջոցը պետականության հատկանիշների գոյությունն անտեսելով լոկ օտար տիրապետության (մարզպանական և Արմինիա կուսակալության) շրջան համարելն է: Սակայն, աղբյուրների համակողմանի ուսումնասիրությունից հետևում է, որ չնայած երկրի արևելյան, մարզպանության վերածված մասում թագավորական իշխանության բացակայությանը՝ պետականության բավարար հատկանիշները կային: Բանն այն է, որ հայ ավատատեր ազատանու հողային ժառանգական իրավունքները պահպանվում էին, ինչի շնորհիվ Մարզպանական Հայաստանը նախարարական տիրույթների ամբողջություն էր և նախարարական համակարգը պահպանած լինելու շնորհիվ ներքին ինքնավարություն ուներ: Նախարարական իրավունքի առկայությունն ապահովվում էր երկրի ներքին կյանքում իշխան-նախարարների ակտիվ դերակատարումը (աշխարհաժողովներ, այնուհետև՝ եկեղեցաժողովներ) և օտար օրենքների ու հասարակական հարաբերությունների ներթափանցման բացառումը կամ հետևանքների մեղմումը: Չնայած Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև Հայաստանի 591 թ. բաժանումից հետո պարսկա-բյուզանդական քաղաքականությանը՝ միտված Հայաստանի նախարարական համակարգի ոչնչացմանն ու նրա տարածքների՝ վարչականորեն իրենց ձուլմանը, երկրի երկու հատվածներում էլ նախարարական համակարգը պահպանվեց, և դրանք դարձյալ օժտված էին ներքին ինքնավարությամբ:

Այս երևույթը կարելի է համեմատել Հռոմի օրինակի հետ: Հայտնի է, որ 476 թ. Արևմտահռոմեական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց, սակայն Իտալիայում (Ապենինյան թերակղզի) պետականությունը չվերացավ: Դա, ըստ էության կայսերական իշխանության վերացում էր, քանի որ 476–493 թթ. Օդոակրի, այնուհետև՝ 493–555 թթ. օստգոթերի իշխանության ժամանակ, հռոմեական վարչակարգի մեջ որևէ էական փոփոխություն չմտցվեց: Այնտեղ շարունակվում էր հռոմեական իրավունքի կիրառությունն ու խոշոր հողատերերի՝ կոմսերի (կոմես) գոյությունը: Նույնիսկ Կարլոս Մեծի (768–814) կողմից 774 թ. Հյուսիսային և Միջին Իտալիայի նվաճումից հետո էլ, տեղի վարչական համակարգը թողնվեց անփոփոխ:

Թեման արդիական է նրանով, որ մեր օրերում առավել եռանդուն շարունակվում են թուրք-արդբեջանական կեղծարարությունները, կապված հայոց պատմության տարբեր շրջափուլերի հետ: Մասնավորապես կասկածի տակ են դրվում «Աշխարհացոյց»-ում ներկայացված Մեծ Հայքի թագավորության տասնհինգ երկրամասերի հայկական լինելը, այդպիսով նենգափոխելով և խեղաթյուրելով Հայաստանի սահմանների, իրավական կարգավիճակի և առանձին պատմական դեպքերի վերաբերյալ տեղեկությունները: Ի դեպ, հերքվում է Տիգրան Բ Մեծից (Ք. ա. 95–55) հետո մեր պետություն կամ պետականություն ունենալը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն ատենախոսությունում, օգտվելով հայ և օտար սկզբնաղբյուրների երբեմն հարուստ, իսկ երբեմն էլ սուղ կամ իրարամերժ տեղեկություններից, առկա պատմագիտական գրականության հենքի վրա փորձել ենք պատասխանել մեր առջև դրված մի շարք հարցերի: Դրանցից կարևորներն են.

ա. ներկայացնել Մեծ Հայքի թագավորության երկփեղկումից հետո այնտեղ տիրող իրավիճակը, Արևելահայկական թագավորության վարչական կարգավիճակը,

բ. քննել Արևելյան՝ Մարզպանական Հայաստանի և Արևմտյան՝ Ներքին Հայքի ու Սատրապական Հայաստանի, որպես վարչական միավորների, կարգավիճակները,

գ. ցույց տալ նախարարների իրավական կարգավիճակը Սասանյան Իրանի և Բյուզանդական կայսրության կազմում,

դ. նորովի քննել նախարարական համակարգ հասկացությունը և հողատիրության ձևերը,

ե. ճշտել Մարզպանական Հայաստանի սահմանները և պարզել դրա կառավարման համակարգի հետ կապված որոշ հարցեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ատենախոսությունը շարադրված է տարաբնույթ սկզբնաղբյուրների հաղորդումների համադիր քննության, թեմային առնչվող գրականության, ինչպես նաև պատմաքննական ու պատմահամեմատական վերլուծության, քարտեզագրական սկզբունքների համաձայն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության ժամանակագրական սահմանների ընտրությունը (387-630-ական թթ.) ինքնանպատակ չէ: Թեև մարզպանական վարչակարգը Հայաստանում վերջնականապես հաստատվեց 428 թ., սակայն շատ պատմական գործընթացներ վեր հանելու, բացահայտելու կամ դրանց օբյեկտիվ գնահատական տալու համար անհրաժեշտ է հետադարձ քայլ կատարել դեպի Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանման հետ կապված դեպքերը: Ուստի, թեմայի հետազոտության շահերից ելնելով, ելակետ ընտրել ենք հենց այդ թվականը, քանզի հենց այդ ժամանակվանից Հայոց թագավորության իրավական կարգավիճակը փոփոխություն կրեց: Իսկ 630-ական թթ. վերջնաժամկետ ընտրելը պայմանավորված է Հայկական մարզպանությունում Սասանյան Իրանի տիրապետության թուլացման և ապա վերացման հետ: Ներկայացվող ուսումնասիրությունը նման ժամանակագրական ընդգրկմամբ և քննվող խնդիրների ամբողջությամբ իրականացվում է առաջին անգամ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունում սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների վերլուծության միջոցով քննվել են Մարզպանական Հայաստանի և Ներքին Հայքի ու Սատրապական Հայաստանի վարչական կառուցվածքը, դրանց սահմաններն ու իրավական կարգավիճակը: Ցույց է տրվել, որ կենտրոնական իշխանության բացակայության պայմաններում էլ Հայաստանի սահմանները բավականին ընդարձակ էին, իսկ երկիրն ուներ ներքին ինքնավարություն: Քննվել են «Տանուտիրական

Հայաստան», «Տանուտիրական գնդի երկիր» եզրույթները: Հիմնավոր ցույց է տրվել, որ «Տանուտիրական Հայաստանն» իրավական կարգավիճակ չէր, այլ՝ նախարարական Հայաստանի համարժեքն էր: Իսկ «Տանուտիրական գնդի երկիրը» վարչական միավոր էր, որը չէր ընդգրկում ամբողջ Մարզպանական Հայաստանը: Ատենախոսության մեջ քննվել է նաև «Առանշահիկ» եզրույթը, և ցույց տրվել, որ այն սկզբնապես եղել է ոչ թե նախարարություն այլ՝ պարսկական տիտղոս: «Առանշահիկը» հետագայում է ձեռք բերել նախարարական տոհմանվան կարգավիճակ: Քննության է ենթարկվել նախարարների իրավական կարգավիճակը, «տանուտեր» եզրույթը և Դավիթ Սահառունու՝ VI դ. վերջին Հայոց մարզպան կամ Հայոց իշխան լինելու հանգամանքը: Ճշգրտվել են Մավրիկիոս կայսեր (582–602) վարչական վերափոխության արդյունքում առաջացած Չորրոդ Հայք անվանումը կրող եպարքիաների (պրովինցիաների) աշխարհագրական դիրքերը: Ներկայացվել են հզոր նախարարական տոհմերի տիրույթները:

Ատենախոսության մեջ արված եզրակացությունները կարող են օգտագործվել հայոց պատմություն դասավանդելիս և պատմական քարտեզներ կազմելիս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժինը:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

Ատենախոսության շարադրման համար որպես առաջնային աղբյուր օգտագործել ենք հայ մատենագիրների աշխատությունները: Դրանց շարքում կարևոր նշանակություն ունի Փավստոս Բուզանդի աշխատությունը [1] : Այն ընդգրկում է Հայաստանի պատմությունը՝ սկսած Խոսրով Կոտակ թագավորի գահակալումից մինչև Հայաստանի 387 թ. առաջին բաժանումը: Թեմայում օգտագործել ենք պատմիչի տեղեկությունն առ այն, որ Մեծ Հայքի բաժանումից հետո հայկական երկու թագավորություններից բազում գավառներ էին անջատվել, ինչը կարևոր է երկրի վարչական պատկերի ներկայացման համար: Օգտագործել ենք բդեշխությունների կարգավիճակը նկարագրող հատվածը, ինչպես նաև գավառների՝ նախարարական, արքունապատկան կամ եկեղեցապատկան լինելու և առանձին գավառների աշխարհագրական դիրքի վերաբերյալ տեղեկությունները: «Տանուտեր» և «տանուտերություն» եզրույթները քննելիս ևս մեծապես օգտվել ենք Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկություններից:

Հաջորդ կարևոր աղբյուրը Եղիշեի երկն է[2]: Հեղինակը ներկայացնում է 387 թ. հետո Հայաստանում տիրող վիճակը, Արշակունյաց թագավորության անկումը և Հազկերտ II-ի (438/439–457) օրոք կրոնական բռնաճնշումները, որոնց հետևանքով

---

[1] Տե՛ս Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

[2] Տե՛ս Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

Մարզպանական Հայաստանում Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ սկսվեց ապստամբական շարժում: Օգտագործել ենք պատմիչի վկայությունները՝ կապված 451 թ. դեպքերի հետ: Օգտվել ենք նաև նախարարական տոհմանունների, վարչական միավորների աշխարհագրական դիրքի, հողատիրության ձևերի մասին պատմիչի տված տեղեկություններից:

Խնդրո առարկա ժամանակահատվածի պատմության ժամանակագրորեն հաջորդ աղբյուրը Ղազար Փարպեցու աշխատությունն է[3]: Այն ներառում է 387-485 թթ. իրադարձությունները: Այստեղ ևս օգտվել ենք նախարարական տոհմանունների, վարչական միավորների պատկանելիության, դրանց աշխարհագրական դիրքի, Հայոց կաթողիկոսի և Սասանյան արքայի իրավական հարաբերության, Վիրքի և Աղվանքի նկատմամբ Մարզպանական Հայաստանի գերակա դիրքի մասին հաղորդումներից և այլն:

Ատենախոսության շարադրմանը մեծապես նպաստել են Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» և նրան վերագրվող «Աշխարհացոյց» աշխատությունները[4]: Օգտագործել ենք նախարարական տոհմերի, դրանց տիրույթների, վարչական միավորների աշխարհագրական դիրքի, սահմանների, և թեմային առնչվող այլ խնդիրների մասին պատմիչի հաղորդած տեղեկությունները: Օգտվել ենք «Աշխարհացոյց»-ի Մեծ Հայքի թագավորության վարչական բաժանման հատվածից: Այն ոչ միայն տալիս է Հայաստանի վարչական կարգը, այլև նշում է, թե այս կամ այն նահանգն իր գավառներով ո՞ր պետությանն էր միացվել: Օգտագործել ենք նաև այդ աղբյուրի Սասանյան Իրանի VI դ. վարչական բաժանմանը նվիրված հատվածը, որը պատկերացում է տալիս նշված ժամանակահատվածում Մարզպանական Հայաստանի իրավական կարգավիճակի մասին:

Հատկապես VI-VII դդ. պատմության եզակի աղբյուր է Սեբեոս եպիսկոպոսի աշխատությունը: Այն մեզ է հասել առանց վերնագրի և պայմանականորեն կոչվում է «Պատմութիւն Սեբէոսի»[5]: Շատ առումներով մշուշապատ VI դ. հայոց պատմության մասին հնարավոր է ընդհանուր պատկերացում կազմել Սեբեոսի երկի շնորհիվ: Ատենախոսությունում օգտագործել ենք խնդրո առարկա ժամանակաշրջանի հայ նախարարությունների մասին պատմիչի հաղորդած տեղեկությունները, հայերի 571-572 թթ. ապստամբության դեպքերը, որից հետո Մարզպանական Հայաստանի վարչական կառուցվածքում փոփոխություն կատարվեց: Հատկապես կարևոր է պատմիչի կողմից Հայաստանի 591 թ. բաժանման դեպքերի նկարագրությունը, դրա հետևանքով առաջացած վարչական պատկերը, ինչը հնարավորություն է ընձեռում

[3] Տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

[4] Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, 1991, Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

[5] Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979:

եզրակացություններ անելու նաև դրանից առաջ Հայկական մարզպանության վարչական կառուցվածքի վերաբերյալ:

Ատենախոսության շարադրմանը նպաստել են նաև VI դ. վերջի վարչական կացության մասին Հովհաննես Դրասխանակերտցու[6], Թովմա Արծրունու[7] և Վարդան վարդապետի[8] հաղորդած տեղեկությունները:

Խնդրո առարկա ժամանակահատվածի պատմության քննության համար կարևոր սկզբնաղբյուրներ են նաև եկեղեցական ժողովների վավերաթղթերը[9]: Դրանք պատկերացում են տալիս այդ ժամանակի իրավակարգի, եպիսկոպոսությունների ու ազդեցիկ նախարարությունների թվաքանակի, ինչպես նաև երկրում նրանց խաղացած դերի մասին:

Օտար աղբյուրների շարքում մեր ուսումնասիրության համար շատ արժեքավոր է VI դ. բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու աշխատությունը[10]: Այն մեզ համար կարևորվում է ոչ այնքան պարսկա-բյուզանդական և արևմուտքում բյուզանդական կայսրության մղած պատերազմների առումով, որքան Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող հայկական իշխանությունների կարգավիճակի և ճակատագրի վերաբերյալ պարունակած հարուստ ու արժանահավատ տվյալներով:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ասորական աղբյուրները [11] : Դրանցում արժեքավոր տեղեկություններ կան հայերի դեմ V դ. վերջին-VI դ. կեսերին Սասանյանների անհանդուրժող քաղաքականության վերաբերյալ: Հատկապես շահեկան են Մարզպանական Հայաստանի վարչական կառուցվածքի վերաբերյալ Զաքարիա Միտիլենացու հաղորդումները:

Արժեքավոր են նաև արաբ մատենագիրներ Թաբարիի, Բալազուրիի, Յակուբիի, Իբն-ալ Ֆակիհի և այլոց աշխատությունները[12], որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում հատկապես Սասանյան Իրանի վարչական կառուցվածքի վերաբերյալ:

Հայագիտության մեջ քննվող թեմայի ուսումնասիրության շրջանակներում ծանրակշիռ աշխատանք է կատարել Ն. Ադոնցը: Մեծանուն հայագետն իր կոթողային

---

[6] Տե՛ս Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2010:

[7] Տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2010:

[8] Տե՛ս Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862:

[9] Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, Բաբգէն կաթողիկոս Ոթմսեցի, «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Զ դար, Անթիլիաս-Լիբանան, 2004, Ներսէս Բագրեւանդացի, «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Զ դար, Անթիլիաս-Լիբանան, 2004:

[10] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 5, Բյուզանդական աղբյուրներ Ա, Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967:

[11] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 8, Ասորական աղբյուրներ Ա, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Մելքոնյանի, Երևան, 1976:

[12] Տե՛ս The history of al-Ṭabarī, translated by C. E. Bosworth, vol. V, New York, 1999, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 16, Արաբական աղբյուրներ Գ, արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրից թարգմանությունը՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005:

ուսումնասիրության [13] մեջ անդրադարձել է Հայաստանի Արևմտյան՝ բյուզանդապատկան և Արևելյան՝ մարզպանական հատվածների պատմական աշխարհագրությանը, վարչաիրավական կարգավիճակին, քննել նախարարությունների ծագման, էության, նախարարական տիրույթների ընդգրկած տարածքների հետ կապված խնդիրները:

Մեր թեմայի ուսումնասիրման շրջանակներում հաջորդ կարևոր քայլն իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատությամբ կատարել է Հ. Մանանդյանը[14]: Նա, հարուստ աղբյուրագիտական հենքի վրա փորձել է պարզել Հայաստանում ավատատիրական հարաբերությունների ձևավորման հիմքերը, բնույթը և տևողությունը: Զգալի առումով հետևելով Ն. Ադոնցին՝ նա աշխատել է տալ նախարարական դասակարգի էության, կարգավիճակի, հողատիրության ձևերի և այլ բնույթի հարցերի պատասխանները:

Մեր քննության առարկա հիմնախնդիրների մշակման գործում մեծ դեր է խաղացել Ս. Երեմյանը՝ իր ոչ միայն «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, պատմաաշխարհագրական ուսումնասիրությամբ [15] , այլև բազմաթիվ գիտական հոդվածներով [16] : Դրանք լույս են սփռում վաղ ավատատիրական Հայաստանի պատմական աշխարհագրության, վարչական կառուցվածքի, քաղաքական պատմության և մի շարք այլ հարցերի վրա:

Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության բնագավառում, շարունակելով Ս. Երեմյանի գործը, իր ծանրակշիռ խոսքն է ասել Բ. Հարությունյանը: Նա իր աշխատությունում[17] քննել է Արշակունյաց թագավորության շրջանում վարչական միավորների՝ աշխարհների ձևավորման, դրանց կազմում գտնվող գավառների տեղադրության, սահմանների ու այլ բնույթի հարցերը: Ցույց է տվել ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով առաջ եկած վարչական փոփոխությունները: Արժեքավոր են նաև հեղինակի՝ խնդրո առարկա թեմային նվիրված մյուս ուսումնասիրությունները[18]:

---

[13] Տե՛ս Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987:

[14] Տե՛ս Մանանդյան Հ., Երկեր, հ. Դ, Երևան, 1981, էջ 187-436:

[15] Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963:

[16] Տե՛ս Երեմյան Ս., Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալականացող Հայաստանում. «Զեռական իշխանությունը» հին Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, թիվ 1, նույնի՝ «Ծաւդէացւոց իշխանութիւն», ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1960, թիվ 7-8, նույնի՝ Сюния и оборона сасанидами кавказских проходов, «Известия» АрмФилиал, 1941, № 7, նույնի՝ Народно-освободительная война армян против персов в 450-451 гг., «Вестник древней истории», 1951, № 4 և այլն:

[17] Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, Մաս Ա, Երևան, 2001:

[18] Տե՛ս Հարությունյան Բ., Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, 2016, նույնի՝ Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, թիվ 2, նույնի՝ Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի

Հաջորդ ուսումնասիրությունը, որն անմիջականորեն աղերսվում է մեր թեմային՝ Ա. Սուքիասյանի աշխատությունն է[19]: Նա ամբողջացնելով իր նախորդների հիմնական եզրակացություններն ու դրույթները ներկայացրել է Արշակունյաց և հետարշակունյաց Հայաստանում տիրող ներքին կարգերը: Քննելով նախարարական համակարգը, նրա կառուցվածքն ու դրանից բխող այլ հարցեր, նա հիմնականում համերաշխվել է Ն. Ադոնցի ու Հ. Մանանդյանի հետ, ամփոփ ներկայացրել Հայաստանի երկու հատվածների վարչաիրավական պատկերը և նախարարների իրավունքների վերացմանն ուղղված օտար տիրակալների գործողությունները:

Օգտվել ենք նաև Վ. Իսկանյանի՝ IV–VII դդ. հայ-բյուզանդական հարաբերություններին նվիրված աշխատությունից[20]: Դրանում մասնավորապես հանգամանորեն ուսումնասիրվել են քննվող ժամանակաշրջանում նախարարական ապստամբությունները, ինչպես նաև Հայաստանում պարսկա-բյուզանդական պատերազմների ու արաբական արշավանքների հետևանքները:

Մարզպանական Հայաստանի վարչաիրավական կարգավիճակի ուսումնասիրության համար շատ արժեքավոր են Է. Խուրշուդյանի երկու մենագրությունները[21]: Հեղինակը դրանցում մանրակրկիտ լեզվաբանական ու պատմագիտական կտրվածքներով քննել է պարթևական տերությունում ու Սասանյան Իրանում գոյություն ունեցած պետական ապարատի կազմը (բդեշխ, պադգոսպան, մարզպան, հազարապետ, մարդպետ, սպահբեդ ևն), այդ եզրույթների իմաստային նշանակությունները, գործառույթները, ինչպես նաև ժամանակի ընթացքում կրած իմաստային ու բովանդակային փոփոխությունները: Իր քննության մեջ հետազոտողն առատորեն օգտագործելով հայ մատենագրության նյութը, համեմատություններ է կատարել դրանց և Հայաստանում առկա նույն պաշտոնների միջև:

Ուտիք ու Արցախ նահանգների, դրանց վարչական կառուցվածքի և քաղաքական կացության խնդիրներին են նվիրված Ա. Հակոբյանի աշխատությունները[22]: Մեզ համար հատկապես կարևոր են Աղվանից մարզպանության կազմավորման և Ուտիք ու Արցախ նահանգների՝ բուն Աղվանքին միացման վերաբերյալ հեղինակի կատարած դիտարկումները:

վարչա-քաղաքական կացությունը 387-451 թվականներին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, թիվ 2 և այլն:

[19] Տե՛ս Сукиасян А., Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (III-IX вв.), Ереван, 1963:

[20] Տե՛ս Իսկանյան Վ., Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Երևան, 1991:

[21] Տե՛ս Хуршудян Э., Армения и сасанидский Иран (Историко–культурологическое исследование), Алматы, 2003, նույնի՝ Государственные институты парфянского и сасанидского Ирана (III в. до н. э. – VII в. н. э.), Алматы, 2015:

[22] Տե՛ս Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, նույնի՝ Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար (Պատմա-աղբիւրագիտական քննութիւն), Երեւան, 2020:

Օգտագործել ենք նաև Հ. Բարթիկյանի ուսումնասիրությունը[23]: Նա քննել է Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո Հռոմեական (այնուհետև Բյուզանդական) տիրապետության տակ գտնվող հայկական գավառների վարչաքաղաքական բաժանումը, իրավական կարգավիճակը, ինչպես նաև Հուստինիանոս I կայսեր (527-565) ռազմավարչական վերափոխությունների հետևանքով առաջացած պատկերը:

Օգտագործել ենք Ա. Եղիազարյանի աշխատության[24] այն հատվածները, որոնք վերաբերվում են Մարզպանական Հայաստանի սահմաններին և նրա կազմում գտնվող գավառներին:

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում օգտվել ենք Ռ. Հարությունյանի աշխատություններից: Հեղինակն իր ատենախոսության մեջ [25] անդրադարձել է Այրարատ աշխարհի պատմաաշխարհագրական քննությանը: Հատկապես օգտագործվել են գավառների նախարարներին կամ արքունիքին պատկանելու վերաբերյալ նրա եզրակացությունները: Շահեկան են հեղինակի այն հոդվածները[26], որոնք վերաբերում են Մարզպանական Հայաստանի սահմանների ու վարչական կառուցվածքի քննությանը: Վերլուծության է ենթարկվել և փորձ է կատարվել քննելու նախարարությունների թվաքանակը մարզպանության շրջանում:

Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրման համար օգտագործել ենք Տ. Գևորգյանի թեկնածուական ատենախոսությունը[27]: Մասնավորապես անդրադարձել ենք նրա Այսրկովկասում մարզպանական վարչակարգի հաստատման, բուն Աղվանքին հայկական Ուտիք ու Արցախ նահանգների բռնակցման, «Առանշահիկ» տոհմանվան խնդիրների հետ կապված մոտեցումներին:

Մեր օգտագործած օտարալեզու ուսումնասիրությունների մեջ հատկապես առանձնանում է Ա. Վակկայի մենագրությունը[28]: Այդ արժեքավոր աշխատության մեջ հայկական, արաբական, վրացական, հունական, պարսկական և ասորական հարուստ աղբյուրների հիման վրա հիմնականում քննության են ենթարկվել Հայաստանի

---

[23] Տե՛ս Բարթիկյան Հ., Արևմտյան Հայաստանը VI դարում (տե՛ս Հայոց պատմություն, հ. II, Գիրք առաջին, էջ 247-261):

[24] Տե՛ս Եղիազարյան Ա., Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2010:

[25] Տե՛ս Հարությունյան Ռ., Մեծ Հայքի Այրարատ աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1996:

[26] Տե՛ս Հարությունյան Ռ., Մարզպանական Հայաստանի սահմանները, «Բանբեր Երևանի համալսարանի», 2010, թիվ 1, նույնի՝ Մարզպանական Հայաստանի վարչական կառուցվածքի հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 2, նույնի՝ Նախարարությունները Մարզպանական Հայաստանում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2009, թիվ 1:

[27] Տե՛ս Գևորգյան Տ., Հայոց Արևելից կողմերը ըստ «Աշխարհացույց»-ի, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2013, նույնի՝ Формирование марзпанства Аран и включение в его состав армянских областей Арцах и Утик, «Պատմաբանասիրական հանդես», 2012, թիվ 2:

[28] Տե՛ս Vacca A., Non-Muslim provinces under Early Islam: Islamic rule and Iranian legitimacy in Armenia and Caucasian Albania, Cambridge, 2017:

վարչական կարգավիճակին վերաբերվող հարցերը, անդրադարձ է կատարվել հայ նախարարություն հասկացությանն ու «Հայոց իշխան» տիտղոսի էությանը: Այս աշխատությունն արժեքավոր է ոչ միայն իր աղբյուրագիտական լայն ընդգրկման, այլև հեղինակի միանգամայն իրավացի մոտեցումների առումով:

Օտարալեզու ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել նաև Փ. Փուրշարիաթիյի[29] ու Ս. Ռափի[30] մենագրությունները: Երկու հեղինակներն էլ հարուստ աղբյուրագիտական հենքի վրա ուսումնասիրել են Սասանյան շրջանի պատմության ամենատարբեր բնագավառները: Օրինակ, Փ. Փուրշարիաթին ուշադրություն է դարձրել պարսկա-բյուզանդական պատերազմների հետևանքով Առաջավոր Ասիայում առաջացած կացությանը, դրանց հետևանքներին ու դինաստիական պատերազմներին: Իսկ Ս. Ռափը հետազոտության առարկա ունենալով Սասանյանների տիրապետության շրջանում վրացական պետության կարգավիճակի ուսումնասիրությունը, ի թիվս վրաց հասարակական-քաղաքական պատմության հարցերի, անդրադարձել է նաև Գուգարաց բդեշխության ու բդեշխների կարգավիճակին առնչվող հարցերին:

Հարավային Կովկասում ավատատիրական հարաբերությունների քննության հետ կապված անհնար է շրջանցել Ա. Նովոսելցեվի շահեկան ուսումնասիրությունը[31]: Հեղինակը կիրառելով պատմահամեմատական ու քննական մեթոդները, զուգահեռներ է անցկացրել Հայաստանի ու Վրաստանի միջև, ներկայացրել երկու երկրներում (IV-VIII դդ.) առկա հասարակական կարգերի էությունը, դրանցում առկա սեփականության ձևերը, նմանություններն ու տարբերությունները, ինչպես նաև ժամանակի ընթացքում ավատատիրական սանդուղքի փոփոխման երևույթները:

Վաղ ավատատիրական Հայաստանի իրավունքի պատմության ուսումնասիրության համար կարևոր են Խ. Սամվելյանի[32] և Գ. Ղազինյանի ու Ա. Վաղարշյանի[33] հայոց իրավունքի պատմությանը նվիրված աշխատանքները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից երկու գլուխներից, հինգ ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործած աղբյուրների ու գրականության ցանկից և մեկ քարտեզից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 148 էջ:

Առաջին գլուխը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (387–630–ԱԿԱՆ ԹԹ.)», բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլուխը վերնագրված է **«Մեծ Հայքի արևելյան հատվածի վարչական կառուցվածքն ու իրավական կարգավիճակը»:** Ինչպես հայտնի է

[29] Տե՛ս Pourshariati P., Decline and fall of the Sasanian empire. The sasanian-parthian confederacy and the arab conquest of Iran, London-New York, 2008:

[30] Տե՛ս Rapp S., The Sasanian world through Georgian eyes, London-New York, 2014:

[31] Տե՛ս Новосельцев А., Генезис феодализма в странах Закавказья, Москва, 1980, Новосельцев А., Пашуто В., Черепнин Л., Пути развития феодализма, Москва, 1972:

[32] Տե՛ս Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմությունը, հ. I, Երևան, 1939:

[33] Տե՛ս Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը. Հին շրջանից մինչև մեր օրերը, Երևան, 2014:

տարածաշրջանում գերիշխանության համար Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի մղած պայքարի հետևանքով Մեծ Հայքի թագավորությունը 387 թ. բաժանվեց երկու հատվածի: Բաժանման հիմքում ընկած էր Արշակ Գ (380–387/88) և Խոսրով Վերջին (384–388, 414–415) Արշակունիների կողմից միմյանց միջև երկրի փաստացի բաժանումը: Այդ բաժանման հետևանքով Արևելահայկական թագավորության տարածքային կորուստները դեռևս մեծ չէին: Նրա ենթակայությունից դուրս էին եկել միայն բդեշխությունները: Դա բացատրվում է նրանով, որ չորս բարձրագույն գահերը զբաղեցնող բդեշխները, երբ հայոց արքան իրավական առումով դարձավ պարսից արքայից արքայի ստորական՝ դուրս եկան նրա գերակայությունից, և անմիջապես ենթակա դարձան պարսից արքային [34] : Չնայած տարածքային կորուստներին՝ Արևելահայկական թագավորությունը դեռևս խոշոր պետություն էր և ընդգրկում էր Տայք, Այրարատ, Սյունիք, Ուտիք, Արցախ, Փայտակարան, Վասպուրական, Մոկք, Տուրուբերան նահանգներն ամբողջությամբ, Գուգարք նահանգի Կղարջք, Արտահան, Ջավախք ներքին, Տաշրաց սեպհականություն գավառները, Աղձնիքի՝ Սասուն/Սանասունք գավառը, բացառությամբ Երխեթք, Գզեղխ, Սալնո ձոր, Ազնվաց ձոր, Տատիկ և Կեթիկ գավառների, Կորճայք նահանգի բոլոր գավառները բացառությամբ՝ Կորդուքի, Պարսկահայքի՝ Զարավանդ, Հեր, Առնա, Զարեհավան, Տամբեր և Այլի (Կուռիճան) գավառները:

Իրավական առումով Մեծ Հայքի արևելյան հատվածում մարզպանական վարչակարգը հաստատվել է 428 թ. հայ Արշակունիների թագավորության անկմամբ: Այդ թվականից առաջ պարսիկ մարզպանի առկայությունը, եթե այդպիսին իսկապես եղել է, կարող էր նշանակել այնտեղ մարզպանության հաստատման փորձ, բայց ոչ դրա իրավական ամրագրում՝ ստեղծում: Ընդ որում, նույնիսկ այն պարագայում, երբ դա երբեմն չէր ուղեկցվում թագավորական իշխանության վերացումով:

Քննության են ենթարկվել Մարզպանական Հայաստանի սահմանները և պարզվել, որ Մարզպանական Հայաստանի հյուսիսային սահմանի մեջ էին մտնում ոչ միայն Ներքին Ջավախք և Տաշրաց սեպհականություն գավառները, այլև՝ մինչև VI դ. Կանգարքը: Հյուսիս-արևելյան սահմանի մեջ էին մտնում մինչև 451 թ. Արցախ նահանգը և Ուտիքի Գարդման գավառը: Ինչ վերաբերում է արևելյան սահման Փայտակարանին, ապա այն 428 թ. արդեն անջատվել և կցվել էր Ատրպատականին: Մարզպանական Հայաստանի հարավ-արևելյան սահմաններն ընդգրկել են Պարսկահայք նահանգի Զարավանդ, Հեր, Զարեհավան, Առնա, Տամբեր և Այլի գավառները: 387 թ. հետո «Աշխարհացոյց»-յան Կորճայք նահանգի սահմանում կային երկու վարչամիավորներ՝ Կորդիքը (Կորդիք Վերին, Կորդիք Միջին, Կորդիք Ներքին) և Տմորիքը (Ճահուկ, Փոքր Աղբակ, Որսիրանք, Այտվանք, Այգառք, Մոթողանք, Կարթունիք), որոնք էլ ավատատիրական հարաբերությունների հետագա խորացման, ինչպես նաև վարչաքաղաքական փոփոխությունների պայմաններում տրոհվել էին ավելի փոքր միավորների: Մոկք նահանգը ևս գտնվում էր Հայաստանի

[34] Տե՛ս Յարութիւնեան Բ., Մեծ Հայքի բդեշխութիւնների եւ բդեշխութեան հաստատութեան շուրջ, «Հանդէս ամսօրեայ», 2001, թիւ 1-12, սյուն. 114:

սահմաններում, իսկ հարավ-արևմտյան սահմանն էր 387 թ. Աղձնիքի Սասուն/Սանասունք գավառը և Տուրուբերանի հարավային եզրագիծը:

Այս ենթագլխում քննության է ենթարկվել «Առանշահիկ» եզրույթը, որն ուսումնասիրողների մի մասի կողմից համարվել է նախարարական տոհմ: Աղբյուրների քննությունը բերել է այն եզրակացության, որ Առանշահիկ նշանակում էր Առանի տիրակալ կամ իշխան, և սկզբնական շրջանում, երբ այն տրվել էր պարսից արքայի կողմից, հանդիսանում էր անկասկած տիտղոս և ոչ թե տոհմանուն: Աղվանից մարզպանության տրոհման արդյունքում, երբ Աղվանք անունը սկսել էր կիրառվել Հայոց Արևելից կողմանց՝ Ուտիքի և Արցախի նկատմամբ, հնարավորություն էր տվել տեղի իշխաններին, որոնք այդ տիտղոսը կրում էին ժառանգաբար, վերածել տոհմանունի, ինչն ամրագրելու էր, որ իրենք են Աղվանքի տիրակալները: Արդյունքում կազմավորվել էր հայկական ինքնուրույն իշխանություն՝ հայկազուն Առանշահիկ իշխանների գլխավորությամբ:

Մեծ Հայքի թագավորության իրավական կարգավիճակը 387 թ. բաժանմամբ փոփոխություն կրեց: Եթե նախկինում Մեծ Հայքում Սասանյան Պարսկաստանի տիրապետությունը կրում էր ժամանակավոր բնույթ, ապա այդ բաժանման հետևանքով դա ստացավ վերջնական իրավական ամրագրում: Այժմ Մեծ Հայքի թագավորությունը de jure և de facto այլևս անկախ պետություն չէր: Հայոց թագավորը համարվում էր պարսից արքայի ստորական՝ կիսանկախ տիրակալ, թեև երկիրը նախարարական համակարգի հիմքի վրա պահպանել էր ներքին ինքնավարությունը:

Սկզբնական շրջանում պարսից արքունիքը Մարզպանական Հայաստանին բավականին լայն իրավական կարգավիճակ էր շնորհել: Այդ հանգամանքը պայմանավորված էր երկրում հզոր նախարարական-իշխանական տների առկայությամբ և նաև եկեղեցական-քաղաքական առումով Այսրկովկասում նրա դերակատարմամբ: Մարզպանական Հայաստանի իրավական կարգավիճակի մեջ պարսից արքունիքը փոփոխություն կատարեց Վարդանանց պատերազմի նախօրյակին, երբ հազարապետի ու մեծ դատավորի պաշտոնները հանձնեց պարսիկներին, իսկ եկեղեցին, որ մինչ այդ ապահարկ էր՝ դարձրեց հարկատու: Սակայն 482–484 թթ. Վահանանց պատերազմի ընթացքում հայ ժողովրդի համառ պայքարի շնորհիվ նախարարների ու եկեղեցու իրավունքները պարսից արքունիքի կողմից վերահաստատվեցին: Դա իրավական առումով նշանակում էր, որ Հայաստանում շարունակելու էին գործել նախարարական և եկեղեցական իրավունքները, որպես հասարակական, քաղաքական ու եկեղեցա-կրոնական հարաբերությունների կարգավորիչներ:

Առանձին քննության են ենթարկվել «Տանուտիրական Հայաստան», «Տանուտիրական գնդի երկիր» եզրույթները: Հիմնավոր ցույց է տրվել, որ «Տանուտիրական Հայաստանն» իրավական կարգավիճակ չէր, այլ՝ նախարարական Հայաստանի համարժեքն էր: Իսկ «Տանուտիրական գնդի երկիրը» VI դ. երկրոդ կեսին ստեղծված վարչական միավոր էր, որը չէր ընդգրկում ամբողջ Մարզպանական Հայաստանը:

Երկրորդ ենթագլխում՝ «Մեծ Հայքի արևմտյան հատվածի վարչական կառուցվածքն ու իրավական կարգավիճակը», ներկայացվում են Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո Հռոմեական (այնուհետև՝ Արևելահռոմեական, Բյուզանդիա) կայսրության տիրապետության ներքո գտնվող տարածքների՝ Ներքին Հայք, Սատրապական Հայաստան, որպես վարչական միավորների կարգավիճակները: Այնուհետև, ներկայացվում են բյուզանդապատկան Հայաստանում Հուստինիանոս I և Մավրիկիոս կայսրերի կողմից իրականացված ռազմավարչական վերափոխությունները: Քննության են ենթարկվել Դավիթ Սահառունու բյուզանդապատկան Հայաստանի կառավարչի հարցը և կառավարման թվականները: Ցույց է տրվել, որ VI դ. վերջերին հիշատակված Դավիթ Սահառունին պատմական անձ չէր, և որ համանուն նախարարը եղել էր ոչ թե Հայոց մարզպան, այլ՝ Հայոց իշխան 635–638/39 թթ.:

Երկրորդ գլուխը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ (387–630–ԱԿԱՆ ԹԹ.)», բաղկացած է երեք ենթագլխից: Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Նախարարական համակարգի էությունը»,** ամբողջացվել և ներկայացվել են նախարար եզրույթի էությունը, դրա բովանդակությունը, նախարարությունների կարգավիճակը: Քննության են ենթարկվել «տանուտեր» ու «տանուտերություն» եզրույթները, ըստ այդմ պարզվել է, որ «տանուտերը» նույն նախարարն էր՝ տոհմի նահապետը, իսկ «տանուտերությունը»՝ 1. նախարարին տրվող պատիվն էր, որի հիման վրա նա իրականացնում էր իր տիրույթի կառավարումը, 2. նախարարության այլ անվանաձևն էր, 3. հաճախ արտահայտում էր նաև պաշտոնի՝ իշխանության իմաստ:

Երկրորդ ենթագլխում՝ «Նախարարների հողատիրական իրավունքներն ու տիրույթները», քննության են ենթարկվել հողատիրության ձևերը: Ցույց է տրվել, որ «Պարգևականք» կոչվող հողերը մի քանի տեսակի էին՝ 1. հողեր, որոնք թագավորը շնորհում էր ավագանուն ամենատարբեր առիթներով, ինչը նվիրատվության բնույթ էր կրում և դառնում էր ստացողի սեփականությունը, 2. հողեր, որոնք արդեն պայմանական էին (սկսած IV դ. վերջերից) և տրվում էին որոշակի ծառայությունների (հիմնականում ռազմական) դիմաց, կրելով ցմահ կամ ժառանգական բնույթ, 3. «Ձեռական իշխանության» հողեր, որոնք որպես «ուտեստ» վարչական ծառայության դիմաց հատկացվում էին արքունապատկան տիրույթներից: Դրանք նախարարների տնօրինության տակ գտնվում էին այնքան ժամանակ քանի դեռ նրանք պաշտոնավարում էին:

Ներկայացվել են աշխարհիկ և հոգևոր իշխանություններին պատկանող հողատիրույթները: Հայկական սկզբնաղբյուրների հիման վրա կազմվել է մարզպանական շրջանում առկա նախարարական տոհմերի քանակական աղյուսակ, որից հետևում է, որ դրանց թիվը 46 էր:

Երրորդ ենթագլխում՝ «Մարզպանական Հայաստանի կառավարման համակարգը», ներկայացվում են Արշակունյաց թագավորության շրջանի կառավարման օղակները, այնուհետև համեմատություններ են կատարվում հարևան Վիրքի նույն կարգերի հետ, և, ապա ներկայացվում է Հայաստանի մարզպանական շրջանում առկա կառավարման ձևը: Ցույց է տրվում, որ որոշակի փոփոխություններով հանդերձ մարզպանական շրջանի Հայաստանում (428-630-ական թթ.) պահպանվել էր

թե՛ Արշակունյաց թագավորության կառավարման համակարգը, այդ թվում՝ նախարարների հողատիրական ժառանգական իրավունքները, թե՛ երկրի կառավարման մեջ նրանց մասնակցությունը և թե՛ Հայոց եկեղեցու կարգավիճակը: Դրա շնորհիվ էլ Հայաստանը պահպանել էր ներքին ինքնավարությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ներկայացված են ատենախոսության հիմնական եզրահանգումները:

1. Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանումից հետո Արևելահայկական թագավորությունն ընդգրկում էր Տայք, Այրարատ, Սյունիք, Ուտիք, Արցախ, Փայտակարան, Վասպուրական, Մոկք, Տուրուբերան նահանգներն ամբողջությամբ, Գուգարք նահանգի Կղարջք, Արտահան, Ջավախք Ներքին, Տաշրաց սեպհականություն գավառները, Աղձնիքի՝ Սասուն/Սանասունք գավառը, Կորճայք նահանգի բոլոր գավառները՝ բացառությամբ Կորդուքի, Պարսկահայքի Զարավանդ, Հեր, Առնա, Զարեհավան, Տամբեր և Այլի (Կուռիճան) գավառները:

2. 450–451 թթ. հակապարսկական ապստամբությունից հետո, Արցախ նահանգը, և Ուտիքի Գարդման գավառը միացվեցին Աղվանքին: Արցախը, որը IV դ. վերջերից Սյունյաց նախարարական տոհմի կրտսեր ճյուղի իրավազորության ներքո էր, Տիզբոնում Վասակ Սյունու դատավարությունից հետո անջատվեց Հայոց մարզպանությունից: Դա միտված էր Սյունիներին թուլացնելուն և քաղաքական ասպարեզից նրանց հեռացնելուն:

3. 428 թ. հետո Մարզպանական Հայաստանի հյուսիսային սահմանի մեջ էին մտնում Գուգարքի Ջավախք Ներքին գավառը, որն Աշոցքի տերության կազմում էր, Տաշրաց սեպհականություն, մինչև VI դ. Կանգարք գավառները: Արևելյան սահմանների մեջ մինչև 451 թ. մտնում էին Ուտիքի Գարդման գավառը և Արցախ նահանգն ամբողջությամբ: Հարավ-արևելյան սահմանների մեջ էին Պարսկահայքի Զարավանդ, Հեր, Զարեհավան, Առնա, Տամբեր և Այլի գավառները: Հարավային սահմանների մեջ մնացին Կորճայք նահանգի բոլոր գավառները՝ բացառությամբ Կորդուքի: Մոկքն ամբողջությամբ Հայոց մարզպանության կազմում էր, իսկ հարավ-արևմտյան հատվածում մնաց միայն Աղձնիքի Սասուն/Սանասունք գավառը: Մարզպանական Հայաստանի արևմտյան սահմանը 387 թ. մինչև 591 թ. մնաց անփոփոխ:

4. Սասանյանները 428 թ. վերացրեցին մերձկասպյան շրջաններում ամփոփված մասքթաց Արշակունիների թագավորությունը: Այն վերածվեց մարզպանության՝ Ճորա մարզպանի ղեկավարությամբ: Սա Աղվանից մարզպանության կազմավորման սկզբնական փուլն էր:

5. «Առանշահիկ»-ը պարսկական տիտղոս էր՝ Առանի, Աղվանքի տիրակալ կամ իշխան, որը կապվում է VI դ. առաջին կեսին Աղվանից մարզպանության տրոհման հետ: Դրա արդյունքում, ինչպես բուն Աղվանքում, այնպես էլ Հայոց Արևելից կողմերում առաջացել էին պետական կազմավորումներ, որոնց տիրակալներին պարսից Խոսրով I Անուշիրվան արքան շնորհել էր շահական տիտղոսներ:

6. VI դ. երկրորդ կեսին Մարզպանական Հայաստանը բաժանված էր երեք ռազմավարչական միավորների՝ Տանուտիրական գունդ, Վասպուրական գունդ, Սյունիք:

7. Տանուտիրական իշխանության երկիրը (Տանուտիրական տուն, Տանուտիրական գունդ) եղել է ռազմավարչական միավոր, որը ստեղծվել էր թերևս VI դ. երկրորդ կեսերին պարսից Խոսրով Անուշիրվան արքայի իրականացրած վերափոխումների արդյունքում: Այն ընդգրկել է ոչ թե Հայկական մարզպանության ամբողջ տարածքը կամ նրա նահանգի մի փոքր հատվածը, այլ, ինչպես Սյունիքն ու Վասպուրական գնդի երկիրը, եղել է առանձին վարչական միավոր՝ ներառելով Այրարատը՝ Տաշրաց սեպհականությամբ, Տայք, Տուրուբերան նահանգները, Աղձնիքի Սասուն/Սանասունք գավառը:

8. Մորիկ կայսրը Հուստինիանոս Ի-ի կազմավորած Չորրորդ Հայքից անջատեց Անգեղտուն և Մեծ Ծոփք (Նփրկերտ) գավառները, որոնք նախկին Աղձնյաց բդեշխության, Ծավդեքի իշխանության և Մեսոպոտամիա պրովինցիայի հետ կազմեցին «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» եպարքիան: Այնուհետև, կայսրը Չորրորդ Հայքի մնացյալ չորս գավառներին ավելացնելով Պաղնատուն, Խորձյան և Մուզուր գավառները՝ կազմավորեց «Չորրորդ Հուստինիանիա (Մյուս Չորրորդ Հայք)» եպարքիան:

9. VI դ. վերջերին հիշատակված Դավիթ Սահառունին պատմական անձ չէ, համանուն նախարարը եղել է ոչ թե Հայոց մարզպան, այլ՝ Հայոց իշխան 635–638/39 թթ.:

10. «Տանուտերություն» եզրույթն արտահայտում էր մի քանի իմաստ՝ ա) պատիվ, որը շնորհվում էր նախարարին, ինչն ամրագրում էր նրա ինքնավար իրավունքներն իր տիրույթների նկատմամբ, բ) նախարարության այլ անվանաձևն էր, գ) հաճախ արտահայտում էր նաև պաշտոնի՝ իշխանության իմաստ: «Տանուտիրական Հայաստան»՝ որպես երկրի կարգավիճակ և «տանուտեր Հայոց»՝ որպես երկրի կառավարիչ՝ մարզպան հայագիտության մեջ շրջանառվող կարծիքները չեն հաստատվում սկզբնաղբյուրների տվյալներով: «Տանուտիրական Հայաստան» եզրույթը կարող է կիրառվել միայն «Նախարարական Հայաստան» իմաստով և ընդգրկել 428–591 թթ. ժամանակամիջոցը:

11. Նախարարության էությունը նրա մեկուսի և անօտարելի լինելու մեջ էր: Այն համարվում էր տվյալ նախարարական տոհմի ժառանգական հողատիրույթը և տրոհման ենթակա չէր: Նախարարությունն ավագության (մայորատ) իրավունքով նախարարից հետո ժառանգում էր երեց որդին՝ ավագ սեպուհը: Տոհմի մյուս անդամները կոչվում էին սեպուհներ և հողի նկատմամբ սեփականության իրավունք չունեին (հավանաբար մինչև VIII դ.): Տանուտիրության հիմքում ընկած էր հողային սեփականության իրավունքը, որը բովանդակում էր նախարարի ինքնավար իրավունքներն իրեն պատկանող տիրույթի նկատմամբ: Հետևաբար՝ տանուտիրության շնորհմամբ այդ իրավունքներն օրինականացվում էին:

12. Մարզպանական շրջանի համար կարող ենք ամբողջացնել մոտ 46 նախարարական տոհմանուն:

13. Հողատիրության «պարգևականք» ձևն ուներ հետևյալ տեսակները՝
ա) «Պարգևականք» հողեր, որոնք թագավորը շնորհում էր ավագանուն ամենատարբեր առիթներով: Դրանք նվիրատվության բնույթ էին կրում և դառնում ստացողի սեփականությունը:
բ) «Պարգևականք» հողեր, որոնք արդեն պայմանական էին (սկսած IV դ. վերջերից) և տրվում էին որոշակի ծառայությունների (հիմնականում ռազմական) դիմաց, կրելով ցմահ կամ ժառանգական բնույթ:
գ) «Ձեռական իշխանության» հողեր, որոնք որպես «ուտեստ» վարչական ծառայության դիմաց հատկացվում էին արքունապատկան տիրույթներից: Դրանք նախարարների տնօրինության տակ գտնվում էին այնքան ժամանակ քանի դեռ նրանք պաշտոնավարում էին:

14. Մարզպանական Հայաստանում որոշակի փոփոխություններով պահպանվել էին թե՛ Արշակունյաց թագավորության պետական կառավարման համակարգը, այդ թվում՝ նախարարների հողատիրական ժառանգական իրավունքները, թե՛ երկրի կառավարման մեջ նրանց մասնակցությունը (հետագայում այն սահմանափակվել էր) և թե՛ Հայոց եկեղեցու կարգավիճակը: Դրա շնորհիվ էլ Հայաստանը պահպանել էր ներքին ինքնավարությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Սասանյան Պարսկաստանի վարչակարգի հաստատումը Մեծ Հայքի արևելյան հատվածում, Վիրքում և բուն Աղվանքում (Vդ.), «Հայոց պատմության հարցեր» 16, Երևան, 2015, էջ 81-97:
2. Հայոց մարզպանների կառավարման հարցի շուրջ, «ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների», 2017, թիվ 1, էջ 48-62:
3. Մարզպանական Հայաստանի կառավարման համակարգը, «Պատմաբանասիրական հանդես», 2017, թիվ 3, էջ 139-150:
4. «Տանուտեր» և «Տանուտերություն» հասկացությունները վաղ ավատատիրական Հայաստանում, «Հայագիտության հարցեր», 2018, թիվ 2, էջ 63-74:
5. «Բյուզանդական Հայաստանի» վարչաիրավական կարգավիճակը 387-640 թթ., «Բանբեր հայագիտության», 2019, թիվ 2, էջ 46-60:
6. Administrative and legal status of Armenian marzpanate in 428-630S, «ՀՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների», 2020, թիվ 1, էջ 144-157:

ХАЧАТРЯН ГЕНРИК АЛЬБЕРТОВИЧ
АДМИНИСТРАТИВНЫЙ СТРОЙ, ПРАВОВОЙ СТАТУС И НАХАРАРСКАЯ (КНЯЖЕСКАЯ) СИСТЕМА АРМЕНИИ В 387–630–ЫЕ ГОДЫ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 "История Армении"

Защита состоится 1-го июня 2021 г., в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию административного строя, правового статуса и нахарарской (княжеской) системы Армении в 387-630-ые годы. Научная работа состоит из введения, двух глав, пяти подглав, заключений, списка использованных источников и литературы, а также карты. Во введении обосновывается научная новизна диссертации, представляются ее цели и задачи, пространственные и временные рамки, рассматриваются использованные источники и литература.

В Первой главе "Административный строй, правовой статус Армении (387-630-ые годы)" представлена политическая ситуация после раздела царства Великая Армения, ее правовой статус и административный строй. Здесь исследованы границы Марзпанской и Византийской Армении, а также их административно-правовой статус. Было установлено, что после 428 г. в северные границы Марзпанской Армении входили уезда провинции Гугарка Внутренний Джавахк, Таширский сепхаканутюн и Кангарк. В восточные границы до 451 г. входили уезд Гардман и провинция Арцах. В юго-восточные границы входили уезда Зараванд, Гер, Зарехаван, Арна, Тамбер и Айли (Куричан) провинции Парскахайк. В южные границы входили все уезда провинции Корчайка, кроме Кордука. Провинция Мокк также была в составе Марзпанской Армении. В юго-западную границу с 387 г. входил уезд Сасун провинции Агдзника и южная граница провинции Туруберан. Отметим, что тут были исследованы также термины "Араншахик", "Танутиракан Армения" и "Страна Танутираканского гунда". Было показано, что "Араншахик" изначально не являлся нахарарским (княжеским) родом, а был персидским титулом, который связан с разделом Албанского (Кавказская Албания, Алуанк) марзпанства в первой половине VI века. В последствие чего, как в собственно Албании также и в Восточных провинциях Армении (Утик и Арцах) были сформированы государственные образования, правителям которых персидский царь Хосров I Ануширван даровал шахские титулы. Было установлено также, что во второй половине VI века Марзпанская Армения состояла из трех военно-административных единиц 1. Танутиракан гунд, 2. Васпуракан гунд, 3. Сюник.

Во Второй главе "Нахарарская (княжеская) система Армении (387-630-ые годы)" был представлен термин "Нахарар", его содержание и правовой статус нахараров. В этой главе также исследовались термины "Танутер" и "Танутерутюн" и было установлено, что первый это тот же наследственный землевладетель нахарар, а второй – это 1. "честь", которая вручалась нахарару, на аснове которой тот управлял своими земельными владениями, 2. была другой формой нахарарства (княжества), 3. часто обозначало также должность, власть. После этого было показано, что существовало несколько видов земель называемых "паргеваканк" (награждаемые) – 1. земли которые король присуждал высшей знати, что носило дарственный характер и был их собственностью, 2. земли которые были уже условными (начиная с конца IV в.) и давались за определенную службу (в основном за военную), что носило пожизненный или наследственный характер, 3. земли "ручной власти", которые давались за административную службу из царских земель. Нахарары (князья) владели этими землями пока были на службе. В научной работе также были представлены землевладения, принадлежащие светским и духовным властям. На аснове армянских источников была создана таблица армянских нахарарских родов марзпанского периода, из чего следует, что их приблизительное число было 46. Была представлена форма управления Аршакидского (Аршакуни) царства, были сделаны сравнения с той же структурой соседней Картлии (Вирк, Грузия), после чего была представлена форма управления Марзпанской Армении. В конце было показано, что несмотря на небольшие изменения в Марзпанской Армении (428-630-ые годы) форма управления Аршакидского царства сохранилась, в том числе и наследственные права нахараров, их участие в управление страной и статус Армянской церкви. Благодаря этому Армения сохранила свою внутреннюю автономию.

В Заключениях приведены основные заключения диссертации.

KHACHATRYAN HENRIK A.

THE ADMINISTRATIVE STRUCTURE, LEGAL STATUS AND NAXARARIAN (PRINCELY) SYSTEM OF ARMENIA IN 387 A.D.–630S

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01

The defense of the dissertation will be held on June 1, 2021, 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

The present dissertation explores the administrative structure, legal status and naxararian (princely) system of Armenia in 387 A.D.-630s. The research work consists of an introduction, two chapters, five subsections, conclusions, a list of primary sources, bibliography, and a map. The introduction defines the scientific novelty of the research paper, states its goals, problems, spatial and chronological boundaries as well as the sources and literature used therein.

In the First chapter "The administrative structure and the legal status of Armenia (387-630s)" represents the current situation after the division of the kingdom of Great Armenia, the legal status of the Armenian kingdom, as well as the administrative picture were presented. Here the borders of Marzpanian and Byzantine Armenia were examined, as well as their administrative and legal statuses. It was found, that after 428 in the northern borders of the Armenian Marzpanate included the Javaxk Inner, Tashirs sephakanutyun and the Kangark districts of the province of Gugark. The district Gardman and the province of Artsakh were included into the Eastern borders till the year of 451. The south-eastern borders included the Zaravand, Her, Zarehavan, Arna, Tamber and Ayli (Kurichan) districts of the province of Parskahayk. The southern borders included all the districts of the province of Korchayk except the Korduk. The province Mokq was in the Marzpanian Armenia. From 387 the district of Aghdznik Sasun and the southern border of the Turuberan province were in the south-western borders. In addition, here we examined the terms "Aranshahik", as well as "Tanutirakan Armenia" and "Land of the Tanutirakan Gund". It was shown that "Aranshahik" was not originally a Naxarar clan, it was a persian title which was associated with the division of the Albanian (Caucasian Albania, Aluank) Marzpanate in the first half of the VI century. State formations were created in Albania and in the eastern provinces of Armenia (Utik and Artsakh) the rulers of which the king of Persia Khosrov I Anushirvan granted the title of Shah. It was found, that in the second half of VI century the Armenian Marzpanate was consisted from three administrative-military unites 1. Tanutirakan gund, 2. Vaspurakan gund, 3. Syunik.

In the Second chapter "The naxararian system of Armenia (387-630s)" represents the term of "Naxarar" (prince), its content, and the status of naxarars. The terms "Tanuter" and "Tanuterutyun" were sudied after which it was established that "tanuter" was the same hereditary landowner naxarar (prince), and the "tanuterutyun" was 1. the "honor", that was awarded to the naxarar, on the basis which he ruled his territory, 2. this was another name for "naxararutyun" (principality), 3. often also meant the post, in the sense of power. After it was shown that there are several types of the land, called "Pargevakank" (rewarded) - 1. lands that the king repeatedly donated to the highest nobles, which was of a donation nature and became the property of the recipient, 2. lands that were already conditional (starting from the end of IV c.) and were given for certain services (usually military), which were of a lifelong or hereditary nature, 3. lands of "manual power" which were given for administrative service at the expense of the royal lands. It was ruled by the naxarars while they were serving. Also, were presented the lands belonging to the secular and spiritual authorities. On the basis of Armenian sources, a quantitative table of the Naxarar houses in the marzpanate period was compiled, according to which there were about 46 of them. This research presents the form of government of the Arshakuni Kingdom, then comparisons are made with the same structure of neighboring Kartli (Virk, Georgia), after which the form of government of Marzpanian Armenia is presented. In the end, it is shown that, despite some changes, in the Marzpanian Armenia (428-630s) the form and system of government of the Arshakuni Kingdom was preserved, including the inheritance rights of the naxarars, their participation in the government of the country and the status of the Armenian Church. Thanks to this, Armenia preserved its relatively internal self-governing system.

The Conclusions presents the main implications drawn from research.